

**ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՀՊԱՇՓԱԿԱՆՆԵՐԻ ՀՆՉԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ
(համաժամանակյա քննություն)**

Բանալի բառեր – Հ. Աճառյան, Հ. Ֆոգտ, հպաշփական բաղաձայններ, հին հայերեն, շնչեղ ձայնեղ, հնչույթային կարգ, արդի բարբառներ

Հին հայերենում տարբերակվում է հպաշփականների երեք հնչույթային կարգ. ձայնեղ՝ *ձ* [j], *ջ* [jʃ], ոչ շնչեղ խուլ՝ *ծ* [c], *ճ* [č] և շնչեղ խուլ՝ *ց* [cʰ], *չ* [čʰ]: Որ գրաբարում դրանք ունեցել են հնչույթային արժեք, ակնհայտ է դառնում գործառական հնչույթաբանության երկու ընթացակարգերի՝ տարբերակիչ հատկանիշների և երկանդամ (բինար) հակադրությունների սկզբունքների կիրառումով: Ըստ այդմ՝ տարբերակվում են հակադրությունների հետևյալ տեսակները. 1) *ձայնեղ* ~ *ոչ շնչեղ խուլ* (հմմտ. *ձագ*, -ու ~ *ծագ*, -ի «ծայր», *ձաղկել* «ծեծել, խարազանել» ~ *ձաղկել* «բուսնել, բողբոջել», *ձառ* «ծուռ, տգեղ» ~ *ծառ*, -ոյ, *ձոյլ* «ձուլված, ձուլածո» ~ *ծոյլ* «անաշխատասեր», *ձիր*, - ձրի «պարզև, նվեր» ~ *ծիր*, - *ծրոյ* «շրջագիծ, շրջան» (*ձ~ծ*), - *ձար* «մազ» ~ *ճար* «հնարք, միջոց» (*ձ~ճ*), - *ջիդ*, -ի «նյարդ, ջիլ» ~ *ծիդ*, -ոյ կամ -ի «ծիլ, ցողուն», *ջին*, -ի «ծեծի գավազան» ~ *ծին*, -ի «ծնունդ, ծագում», *ջախել* «ջախջախել, փշրել» ~ *ծախել* «ծախսել, վճարել», *ջուլ*, -ոյ «ընծիւղ, ծիլ» ~ *ծուլ*, -ու (*ջ~ծ*), - *ջահ*, -ի «վառած լույս՝ պայծառ բոցով»¹ ~ *ճահ*, -ի «պատշաճ, տեղին», *ջոխ* «գավազան, ձեռքի փայտ» ~ *ճոխ*, -ի «1. հարուստ, 2. երևելի» (*ջ~ճ*), - *ձետ*, -ոյ «կենդանիների մազոտ պոչ» ~ *ճետ*, -ի «սերունդ, զարմ» (*ձ~ճ*),). 2) *ձայնեղ* ~ *շնչեղ խուլ* (հմմտ. *ջրել* «ջնջել, ոչնչացնել» ~ *ցրել* «ցրիվ տալ, տարածել» (*ջ~ց*), *ձող*, -ոյ «երկար ուղիղ ու բարակ փայտ» ~ *ցող* «ցորենի ցողուն»², *ձայն*, -ի ~ *ցայն* «այնքան, այնչափ» (*ձ~ց*), *ջախել* «ցաքանել» ~ *ջախել*, - *ցան*, -ի «ցանելը, ցանք» ~ *ջան*, -ի «ճիգ, ջանք» (*ջ~ց*)). 3) *շնչեղ խուլ* ~ *ոչ շնչեղ խուլ* (հմմտ. *չար*, -ի «ոչ բարի, վատ, հոռի» ~ *ճար* «հնարք, միջոց» (*չ~ճ*), *չափ*, -ոյ «չափման միավոր» ~ *ճափ*, -ի «ծափահարելը» (*չ~ճ*), *ցիր* (սեռ. ցրի) «ցրված, տարածված» ~ *ծիր* (ծրոյ), *ցին*, ցնոյ «ճուռակների ընտանիքին պատկանող զիշատիչ թռչուն» ~ *ծին* (*ջ~ծ*): Համեմատաբար փոքրաթիվ են *ձայնեղ~ձայնեղ* հակադրությունները (հմմտ. *ձախ*, -ու «ահյակ» ~ *ջախ*-(ել), *ձրեւ*, -եցի «ձրի տալ, բաշխել» ~ *ջրեւ* «ջուր տալ», *ձան*-(ծաղ) «ճանճաղ» ~ *ջան*, -ի «ջանք, աշխատանք», *ձենն*, -ոին

¹ Ըստ «Առձեռն բարարան հայկազնեան լեզուի», Անթիլիաս, 1988, էջ 705:

² Նույն տեղում, էջ 800:

«ձեռք» ~ ջեռում, -ոյ «տաքանալ», ձեք, -ոյ «ձեքը» ~ ջեք, -ոյ «ջերմություն» (ձ~ջ): Գրեթե չի հանդիպում *ոչ ջնչեղ խուլ* ~ *ոչ ջնչեղ խուլ* տիպի հնչույթային հակադրություն. այդպիսի հնարավոր հակադրություններն էլ այսպես կոչված «մաքուր» տեսակի չեն (հմմտ. *չոր*, -ոյ «խոնավությունից զուրկ» ~ *ցորժամ* «մինչև երբ»)¹: Ընդհակառակը, զգալիորեն շատ են հնչույթային զրոյի հետ հպաշփականների հակադրությունները (հմմտ. *ցայգ*, -ոյ «գիշեր, մինչև լուսանալը» ~ *այգ*, -ու «վաղ առավոտ, լուսաբաց», *ցնորեմ*, -եցի «խելքահան անել, մոլորեցնել» ~ *նորեմ*, -եցի «նորոգել, նորացնել» (*ց~թ*), *ձառ* ~ *առ* (նախդիրը) (*ձ~թ*), *ջայլ*, -ի «մեռելի վրա լացող կանանց խումբ» ~ *այլ*, -ոյ «ուրիշ» (*ջ~թ*), *ծամ*, -ոյ «երկար մազեր» ~ *ամ*, -ի «տարի», *ծայր*, -ի «եզր, վերջ» ~ *այր* (սեռ. *ամն*) «տղամարդ» (*ծ~թ*) են):

Հպաշփականներին բնորոշ է հնչյունական բարդ կազմությունը. նրանք հատկանշվում են հպականների համար բնութագրական պայթյունով արտաբերական *գրոհի* (էքսկուրս²) ժամանակ և շփումով՝ *նահանջի* (ռեկուրս³) ժամանակ, բայց նրանց երկբնույթ արտաբերությունը հնչույթատարբերակիչ արժեք չունի: Ըստ արդի գրական արևելահայերենի հպաշփականների փորձառական ուսումնասիրությունների արդյունքների, այդ հնչյունների կազմում տարբերակվում են «հպական+շփական» հնչառակներ (հմմտ. ձ[j]=դ[d]+զ[z], ծ[c]=տ[t]+ս[s], ց[c']=թ[t']+ս[s], ջ[j]=դ[d]+ժ[ձ], ճ[ճ]=տ[t]+ շ[ճ], չ[ճ']=թ[t']+շ[ճ]), սակայն գործառական առումով նրանք համարժեք են պարզ հնչյունների, ինչպիսին են հպականներն ու շփականներն առանձնաբար⁴: Հպաշփականների այդ հատկության մասին նշում է դեռևս Հ. Հյուբշմանը, ըստ ամենայնի՝ նկատի ունենալով նաև Ջ. Ջիվերսի և Հ. Աճառյանի փորձառական ուսումնասիրության արդյունքները 19-րդ դարավերջին (հմմտ. «... արտաբերելիս [իմա՝ «աֆրիկատները» –Վ. Պ.] երկու տարրը միմյանց հետ հնարավորինս սերտ կապված են, առանձնապես չի կարելի դրանք, ինչպես այդ գերմաներենում հաճախ պատահում է, վանկերի բաժանել»⁵): Մյուս կողմից, նշված հնչառակների առկայությունը հպաշփականների կազմում դեռևս չի նշանակում, որ, օր., *դզ* (dz) հնչյունակապակցությունը հնչաշղթայում համարժեք է *ձ* (j) հնչույթի, իսկ *տս* (ts) հնչյունակապակցությունը՝ *ծ* (c) հնչույթի: Այսպես. նկատի առնելով (*մի՛ յ կրծեք* («կրծել» բայի արգել. հրամ.) ~

¹ Այդ բնորոշումով մենք նկատի ունենք, օր., ծագ-ձագ տեսակի հակադրությունները, երբ համեմատվող ձևերը հնչույթային կազմով համարժեք են, այսինքն՝ ամբողջությամբ ծածկում են մեկը մյուսին:

² Լատիներենի *excursio*-ից՝ «դուրս վազելը», «արտագրոհ»:

³ Լատիներենի *recursus*-ից՝ «հակառակ շարժում», «վերադարձ»:

⁴ Տե՛ս *У Ачатырян А.*, Об аффрикатах армянского языка // «Известия АН АрмССР» (серия общественных наук), 1962, № 11, с. 45-46, **Խաչատրյան Ա. Հ.**, Ժամանակակից հայերենի հնչույթաբանություն, Երևան, 1988, էջ 93-99:

⁵ **Հյուբշման Հ.**, Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 2004, էջ 60:

կրտսեր «տարիքով փոքր» բառերի կազմում մի կողմից՝ *ծ* հնչույթի, իսկ մյուս կողմից՝ *տս* հնչյունական (/հնչույթային) հաջորդականության ձևավորած տարբերակիչ հակադրությունը, կարելի է ասել, որ այդ հակադրության մեջ *տս*-ն համարժեք է *ծ*-ի, որովհետև *ծ*-ն հակադրվում է *տս* հնչյունների ամբողջությանը, այլ ոչ թե՝ նրանցից որևէ մեկին առանձին վերցրած: Բայց դա դեռ չի նշանակում, թե հին հայերենի *տս* հաջորդականությունը մեկ հնչույթ է, որովհետև, օր., *կրտսեր* բառը վանկատելիս՝ նրա բաղադրիչները հայտնվում են տարբեր վանկերում (հմմտ. *կ(ը)րտ-սեր*): Իսկ բաղադրյալ կազմությամբ հնչույթի և համապատասխան հնչյունական/(հնչույթային) հաջորդականության տարբերակման չափանիշներից մեկը վանկատման ժամանակ բարդ հնչույթի հնչյունական բաղադրիչների՝ միևնույն վանկում գտնվելու հատկությունն է¹: Հետևաբար, չնայած *ծ~տս* հնարավոր հնչույթաբանական հակադրությանը, հին հայերենի *տ*-ն և *ս*-ն առանձին հնչույթներ են, այլ ոչ թե՝ միևնույն հնչույթի հնչյունական բաղադրիչներ²: Երբեմն այսպես կոչված բարդ հնչույթը կարող է հակադրություն ստեղծել այլպես իր հնչյունական կազմի «բաղադրիչներից» մեկի հետ, այսինքն՝ նրանց միջև կարող են ձևավորվել գործառական հարաբերություններ (հմմտ. *ծածանիմ* «ալիքաձև շարժվել, ծփալ» ~ *տատանիմ* «տարուբերել, երերել» ~ *սասանիմ* «ցնցել, թափահարել»³): Նկատի ունենալով, որ գրական արևելահայերենը, հայերենագիտության մեջ ընդունված պատկերացման համաձայն, ընդհանուր առմամբ հարազատ է մնացել հին հայերենի հնչույթային (/հնչյունական) համակարգի, մասնավորապես՝ բաղաձայնների հնչարտաբերությանը⁴, ուրեմն կարելի է նույնը ասել նաև հին հայերենի հպաշփականների արտաբերական հատկությունների մասին:

Հպաշփականների երեք հնչույթային կարգերից խնդրահարույց է եղել

¹ Sté u Трубешкой Н. С., Основы фонологии, Москва, 2000, с. 61:

² «Հպաշփական հնչույթ-հնչույթակապակցություն» հակադրությունը սովորական երևույթ է նաև այլ լեզուներում, օր.՝ արդի ռուսերենում. հմմտ. площадь «հրապարակ» ~ плоскость «հարթություն», упрощение «պարզեցում» ~ простой «պարզ, հասարակ» ևն, որոնցում առկա են ш ~ск, ш ~ст հնչույթաբանական հակադրությունները:

³ Ա. Խաչատրյանը վերոհիշյալ օրինակներում տեսնում է հակադրության չեզոքացում (տե՛ս Туманян Э. Г., Древнеармянский язык, Москва, 1971, с. 61), մեր կարծիքով, սակայն, նշված բառերը, հոմանիշ լինելով հանդերձ, նույնիմաստ չեն, հետևաբար առկա է հնչույթաբանական հակադրություն: Իսկ, օր., չուտո և թշվառ բառերի դեպքում իսկապես հակադրություն չկա, քանզի չ-ն և թշ-ն բաղադրում են միևնույն բառային իմաստը՝ «ողորմելի, դժբախտ, խեղճ» (տե՛ս նույն տեղում):

⁴ Հմմտ. «... հին հայերենը արտասանվել է նույն ձևով, ինչպես այսօրվա արևելահայերենը» (Հյուբշման Հ., նշվ. աշխ., էջ 68): - «Միջին գրական հայերենը և արևմտահայ գրական լեզուն մեծապես տարբերվում են արևելահայ գրական լեզվից գրաբարից ունեցած իրենց տարբերությունների բաշխմամբ. Արևելահայ գրական լեզուն առաջին երկուսից ավելի մոտ է գրաբարին հնչյունապես և ավելի հեռու քերականապես» (շեղտո. իմն է՝ Վ. Պ.) // **Ջահուկյան Գ. Բ.**, Միջին հայերենը որպես լեզվական որակ // «ԲԵՀ», 1993, թիվ 1, էջ 17:

ձայնեղների հնչույթաբանական բնութագրի հարցը: Որովհետև հին հայերենի հպաշփականների նկարագրական (համաժամանակյա) քննությունը, որպես կանոն, կատարվել է հպականների հետ ընդհանուր համատեքստում (իր «Ակնարկներ ...»-ում Ա. Մեյեն հպականներն ու հպաշփականները քննում է հպականների ընդհանուր կարգի տակ¹), ուստի այդ առումով ևս հպականների մասին ասվածը հավասարապես տարածվել է նաև հպաշփականների վրա: Այն է. 1) ձայնեղ հպաշփականներն առհասարակ զուրկ էին շնչեղության հատկանիշից², 2) ձայնեղ հպաշփականների շնչեղությունը հնչույթաբանական հատկանիշ էր³, 3) ձայնեղ հպաշփականների շնչեղությունն ուներ միայն հնչյունաբանական արժեք⁴:

Հին հայերենի ձայնեղ հպականներին շնչեղության հատկանիշ վերագրելու համար հիմք է ընդունվում, մասնավորապես, երկու հանգամանք. ա) շնչեղությունն ընդհանուրհնդեվրոպական լեզվի հպական բաղաձայնների բնութագրական գծերից էր, ընդ որում՝ ինչպես ձայնեղների, այնպես էլ խուլերի, իսկ հայերենի հպականները սերել են հ.-ե. հպականներից, բ) իբրև

¹ Sté u Meillet A., Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, Vienne, 1936, p. 25-38:

² Հին հայերենի հպաշփականների հնչարտաբերական հատկությունների մասին Հ. Հյուբշմանը ուղղակի կարծիք չի հայտնել, բայց վերապահումով նրան կարելի է այդպիսի տեսակետ վերագրել՝ նկատի ունենալով, որ այդօրինակ հետևությունը բխում է հին հայերենի հպականների հնչարտաբերական բնույթի մասին նրա պատկերացումներից, այն է՝ հին հայերենի հպականները հ.-ե. շնչեղ ձայնեղ հպականների տեղաշարժի արդյունք են (հմմտ. *b^h>բ, *g^h>գ, *d^h>դ): Դա նշանակում է, որ, ըստ Հ. Հյուբշմանի՝ հին հայերենի հպականները առհասարակ զուրկ էին շնչեղության հատկանիշից: Բսկ հպականներն ու հպաշփականները, ինչպես ասվեց, դիտարկվել են նույն մոտեցումով (հմմտ. **Հյուբշման Հ.**, Հայերենի դիրքը հնդեվրոպական լեզուների շարքում // Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 2004, էջ 24):

³ Sté u Պեդերսըն Հ., Հայերեն եւ դրացի լեզուները, Վիեննա, 1907, էջ 8, Meillet A., Les dialects indo-européens, Paris, 1950, p. 12, Ղարիբյան Ա. Ս., Հայ բարբառագիտական հետազոտությունների հիմնական արդյունքները Սովետական Հայաստանում // «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ «ՊԲՀ»), 1958, թիվ 1, էջ 18-39, նույնի՝ Հայ բարբառների ծագման հարցի շուրջը // «ՊԲՀ», 1958, թիվ 3, էջ 240-266, Гарибян А. С., Новая группа диалектов армянского языка // «Вопросы языкознания» («այսուհետև՝ «ВЯ»), 1958, № 5, с. 95-101, նույնի՝ Об армянском консонантизме // «ВЯ», 1959, № 5, с. 81-90, նույնի՝ Еще раз об армянском консонантизме // «ВЯ», 1962, № 2, с. 18-23, Allen W. S., Notes on the Phonetics of an Eastern Armenian Speaker // Transactions of the Philological Society of America, 1950, p. 180-206, Фогт Г., Заметки по армянскому консонантизму // «ВЯ», 1961, № 3, с. 41, Бенвенист Э., Проблемы армянского консонантизма // «ВЯ», 1961, № 3, с. 38, Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի (այսուհետև՝ ԼՔՀԼ), հ. 6, Երևան, 1971, էջ 554-555, նույնի՝ Հայոց գրերը, Երևան, 1984, էջ 598, Սուրադյան Հ. Գ., Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. I, Հնչյունաբանություն, Երևան., 1982, էջ 296-297:

⁴ Sté u Ջահուկյան Գ. Բ., Հայ բարբառագիտությունը և հայերենի բարբառների ծագման հարցը // «ՊԲՀ», 1959, թիվ 2, էջ 282-319, Джаукян Г. Б., К вопросу о происхождении консонантизма армянских диалектов // «ВЯ», 1960, № 6, с. 39-49, նույնի՝ Очерки по истории дописьменного периода армянского языка, Ереван, 1967, с. 76: Հմմտ. նաև՝ Ջահուկյան Գ. Բ., Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ 263, Աղայան Է. Բ., Գրաբարի քերականություն, Երևան, 1964, էջ 155:

հնչյունաբանական հատկանիշ՝ շնչեղությունը բնորոշ է նաև արդի հայերենի մի շարք բարբառների ձայնեղ հպականներին (Արարատյան, Մշո, Նոր Ջուղայի, Ակնի, Համաշենի, Մեքաստիայի, Շապին-Գարահիսարի, Ջեյթունի, Նոր Նախիջևանի ևն)¹, իսկ արդի հայերենի բարբառները կամ առնվազն դրանց մեծ մասը, ընդունված պատկերացման համաձայն, ետգրաբարյան շրջանի տարածական զարգացումներն են:

Հին հայերենի ձայնեղ հպաշփականներին նույնպես, ինչպես ձայնեղ հպականներին, վերագրվել է շնչեղության հնչյութաբանական հատկանիշ: Եվ դա տրամաբանական է, քանզի, անկախ ծագումնաբանությունից և պատմական զարգացումից, հին հայերենի հպականները և հպաշփականները վաղուց կայունացած բաղաձայնական համակարգի դրսևորումներն էին: Ընդ որում, այդ տեսակետը պաշտպանողների կարծիքով շնչեղությունը՝ որպես հնչյութաբանական հատկանիշ, բնորոշ էր ինչպես նախապատմական, այնպես էլ գրաբարյան հայերենին (հմմտ. «... նախապատմական շրջանում, սկզբնապես, հայերենը ունեցել է բաղաձայնական միասնական մի համակարգ, որի մեջ շնչեղ ձայնեղների արտասանությունը հայերենի համար եղել է որպես հնդեվրոպական միասնության շրջանից ժառանգած հնչարտաբերական ունակություն: Այդ համակարգում, ինչպես նշում է Ֆոգտը, էական [իմա՝ հնչյութաբանական՝ Վ. Պ.] դեր էր կատարում շնչեղության և ոչ շնչեղության հակադրությունը»²): Ակներն է, որ հին հայերենի հպականների և հպաշփականների վերաբերյալ Հ. Ֆոգտի վերլուծությունը Հ. Մուրադյանի համար ունեցել է կողմնորոշիչ նշանակություն (հմմտ. «... հնդեվրոպական շնչեղ ձայնեղ [bh]-ը անփոփոխ է մնացել պատմական Հայաստանի կենտրոնական բարբառներում և, հետևաբար, հայկական այբուբենի տառերը, որոնք տառադարձվում են որպես [b], [d], [g], [j], [j], պիտի տառադարձել որպես [bh], [dh], [gh], [jh], [jʰ]»³): Հասականալի է, որ ինչպես Հ. Ֆոգտի, այնպես էլ Հ. Մուրադյանի (ինչու ոչ, նաև ուրիշների՝ Հ. Աճառյան, Է. Բենվենիստ ևն) այդօրինակ դատողությունների հիմքում հ.-ե. հպականների քառակարգ համակարգն է՝ շնչեղ և ոչ շնչեղ ձայնեղների, շնչեղ և ոչ շնչեղ խուլերի հնչյութաբանական հակադրությամբ՝ B^h [b^h] ~ B [b], P^h [p^h] ~ P [p]: Ինչպես նշել ենք մեր հրապարակումներից մեկում, դեռևս նախորդ դարի կեսերից սկսած հ.-ե. հպականների քառակարգ հայեցակարգը (B^h ~ B ~ P^h ~ P) քննադատել են հնդեվրոպաբաններից շատերը՝ այն համարելով չարդարացված ոչ միայն ծագումնաբանորեն, այլև՝ տիպաբանորեն, և փոխարինել են եռակարգ հայեցակարգով՝ առանց շնչեղ ձայնեղների (B^h) կամ առանց պարզ

¹ Տե՛ս Պետրոսյան Վ., Հին հայերենի ձայնեղ հպականները (համաժամանակյա հայեցակերպ) // «ԲԵՆ. Հայագիտություն», 2019, թիվ 1, էջ 40-51:

² Մուրադյան Հ. Դ., Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. I, Հնչյունաբանություն, Երևան, 1982, էջ 296:

³ Փոգտ Դ., նշվ. աշխ., էջ 41:

ձայնեղների (B), երբեմն էլ՝ առանց պարզ խուլերի (P)¹: Իսկ, օր., Թ. Գամկրելիձեն, Վյաչ. Իվանովը, Պ. Հոպերը, Ֆ. Կորտլանդը և ուրիշներ պարզ ձայնեղների հնչույթային կարգը փոխարինել են խուլ/ձայնեղ ձայնածերպայինների/կատկայնացածների/ (глоттализированные) կարգով՝ P'/B', T'/D', K'/G'²: Իսկ մեր կարծիքով, նախահնդեվրոպականում կարող է ընդունելի լինել հպականների միայն երկու հնչույթային կարգերի վերականգնումը՝ շնչեղ և ոչ շնչեղ ենթահնչույթային/(հնչյունական) տարբերակներով (հմմտ. B^[h] կամ [b^h/b], P^[h] կամ [p^h/p])³:

Հին հայերենի հպաշփականներին շնչեղության հնչույթաբանական հատկանիշ վերագրողների հիմնական փաստարկներից մեկը արդի հայերենի վերոհիշյալ բարբառներում հպաշփականների շնչեղ ձայնեղ հնչույթային կարգի տարբերակումն է (հմմտ. *ձոր>ձ'որ*, *ձաւար>ձ'ավար*, *ձ'էնձ'ընալ* («ձայն»-ի կրկնությամբ) «բարձրաձայնել», *ջրաղաց>ջ'աղաց*, *ջուր>ջ'ուր*, *ջ'ըրջ'ընել* («ջուր»-ի կրկնությամբ) «առատ ջուր ցանել» (Ար.)⁴, *ձուկն>ձ'ուկն*, *ձգել>գ'ձ'ել*, *բարձ>բ'արձ'*, *ջուր>ջ'ուր*, *ջաղացք>ջ'աղաց*, *ջորի>ջ'որի* (Ջղ.)⁵, *ձագ>ձ'ոգ'*, *ձէթ>ձ'էթ*, *ջուր>ջ'որ*, *մրջին>մոռջ'ում* (Ջթ.), *ձագ>ձ'ոգ'*, *ձմենն>ձ'մեր*, *ջրի>ջ'եր*, *առջել>արջ'ել* (ՀՃ.)⁶, *ձայն>ձ'էն*, *ձմենն>ձ'մեր*, *ձուկն>ձ'ուկ*, *ջուր>ջ'ուր*, *ջարդել>ջ'այթուշ* (Հմշ.)⁷, իրականում, սակայն, նշված բարբառների ձայնեղ հպաշփականների շնչեղությունը հնչյունաբանական հատկանիշ է, բայց ոչ՝ հնչույթաբանական: Այդ մասին է վկայում այն իրողությունը, որ վերոհիշյալ բարբառներում չկան միևնույն հպաշփականի ոչ շնչեղ և շնչեղ գործառական (իմս՝ հնչույթային արժեքով) հակադրություններ: Այսինքն՝ չկան, օրինակ՝ *գձել ~ գ'ձ'ել* (Ջղ.), *ձուկ ~ ձ'ուկ* (Հմշ.), *ջոր ~ ջ'որ* (Ջթ.) տիպի հակադրություններ՝ որպես տարբեր իմաստներով բառային միավորներ: Հետևաբար, հպաշփականների ոչ շնչեղ և շնչեղ արտաբերությունները այդ բարբառներում միևնույն հնչույթի կիրառական տարբե-

¹ Տե՛ս **Պետրոսյան Վ.**, Հպական բաղաձայնների հնդեվրոպական համակարգը // «ՎԷՄ», 2019, թիվ 2, էջ 107-136:

² Տե՛ս **Гамкредидзе Т. В., Иванов Вяч. Вс.**, Индоевропейский язык и индоевропейцы, т. I, Тбилиси, 1984, с. 5-17, **Хоппер П. Дж.**, Типология праиндоевропейского набора сегментов // Новое в зарубежной лингвистике, Москва, 1988, с. 169, **Кортланд Ф.**, Праиндоевропейские глоттализированные смычные // «ВЯ», 1985, № 4, с. 52:

³ Տե՛ս **Պետրոսյան Վ.**, նշվ. աշխ.:

⁴ Տե՛ս **Մարկոսյան Ռ.**, Արարատյան բարբառ, Երևան, 1989, էջ 55:

⁵ Տե՛ս **Աճառեան Հ.**, Քննութիւն Նոր-Ձուղայի բարբառի, Երևան, 1940, էջ 115-118, 137-140:

⁶ Տե՛ս **Աճառյան Հ.**, Քննություն Կիլիկիայի բարբառի, Երևան, 2003, էջ 108-109, 119-120:

⁷ Գ. Ղափանցյանը իր հայրենի Աշտարակի խոսվածքում (Արարատյան բարբառ) տարբերակել է ձայնեղ հպականների և հպաշփականների չորս հնչույթային կարգ, այսինքն՝ վերը նշվածներից բացի, նաև շնչեղ ձայնեղների՝ b^h (բ^h), g^h (գ^h), d^h (դ^h), j^h (ձ^h), չ^h (ջ^h) (տե՛ս **Капанцян Г. А.**, Аштаракский говор // **Капанцян Г. А.**, Историко-лингвистические работы, т. II, Ереван, 1975, с. 441-444: Հմմտ. նաև՝ **Ղափանցյան Գր.**, Ընդհանուր լեզվաբանություն, Երևան, 1939, էջ 93, 119-120):

րակներն¹ (= ենթահնչույթները) են, այն է՝ <Ջ^h> = [δ/δ´], <Ջ^h> = [ջ/ջ´]:

Վերոշարադրյալը հիմք է տալիս ասելու, որ՝ 1) հին հայերենում տարբերակվել է հպաշփականների երեք հնչույթային կարգ՝ ձայնեղների (<Ձ>, <Ջ>), ոչ շնչեղ խուլերի (<Օ>, <Ճ>) և շնչեղ խուլերի (<Յ> (= [g´]), <Չ> (= [չ´])), 2) մի կողմից՝ հպական բաղաձայնների հետ համակարգային ընդհանուր միտումների դաշտում գտնվելը, մյուս կողմից՝ արդի հայերենի մի շարք բարբառների՝ որպես հինհայերենյան հետագա տարածական զարգացումների հնչաբանական տվյալները հիմք ընդունելով՝ կարելի է ասել, որ հին հայերենի ձայնեղ հպաշփականները, ըստ ամենայնի, ունեին ոչ շնչեղ ([δ], [ջ]) և շնչեղ ([δ´], [ջ´]) հնչյունական (=ենթահնչույթային) տարբերակներ, որոնցից շնչեղները դրսևորվել են ձայնավորանախորդ դիրքում, հատկապես բառակզրում², իսկ ոչ շնչեղները՝ մյուս դիրքերում, 3) այդ կարգերի՝ միմյանց հետ հնչույթային հակադրություններ ձևավորելու ներունակությունը անհամաչափ էր:

Вардан Петросян – Фонематические характеристики аффрикат древнеармянского языка (синхронный анализ)

В древнеармянском языке было три фонологических серии аффрикат: звонкие (δ/j, ջ/j´), непридыхательные глухие (δ/c, ճ/и) и придыхательные глухие (g/c´, չ/չ´). Согласно некоторым арменоведом (Г. Педерсен, А. Мейе, Г. Ачарян, Э. Бенвенист, Г. Фогт, В. Ален, Г. Мурадян и др.), звонким аффрикатам древнеармянского придыхательность была свойственна как фонологический признак. В основе этой точки зрения лежат два основных положения: 1) являясь отражением и.-е. придыхательных звонких (*b^h, *g^h, *d^h), звонкие смычные древнеармянского сохранили свойственную им придыхательность, в связи с чем в армянском языке не произошло перемещения смычных в традиционном смысле; 2) в ряде диалектов исторической Армении (акинском, амшенском, аджинском, севастийском, араратском, мушском, новоджульфинском, новонахичеванском) свойственная звонким смычным и аффрикатам придыхательность имеет фонологическое значение, причем в некоторых диалектах (араратском, мушском, новоджульфинском) их различают по четырехступенчатой системе противопоставления звонких смычных и аффрикат: ср.: p^h/b^h/~ p/b/~ ɸ^h/p^h/~ ɸ/p/, ջ^h/j^h/~ ջ/j/~ ճ/չ/~ չ/չ´/. Согласно второй точке зрения, которую мы также принимаем и обосновываем с дополнительным анализом, придыхательность древнеармянских аффрикат имела только фонетическое

¹ «Դիրքային տարբերակ» արտահայտությունը չենք գործածում, որովհետև, ինչպես ցույց ենք տվել հպական բաղաձայնների կապակցությամբ, բարբառներում շնչեղ ձայնեղներ հանդիպում են նաև բառամիջի և բառավերջի դիրքերում, ճիշտ է՝ զգալիորեն ավելի քիչ, քան բառակզրում (տե՛ս **Պետրոսյան Վ.**, Հին հայերենի ձայնեղ հպականները (համաժամանակյա հայեցակետ) // «ԲԵՀ. Հայագիտություն», 2019, թիվ 1, էջ 40-51.):

² Նույնիսկ ձիւթ, ձիւն, ձոյլ, ձուլել, ձրի [ձրրի], ձրձել [ձրրձել], «բզկտել, կեղեքել», ջլել [ջրլել] «ջղերը բժշկել», ջրղել [ջրրղել] «անդադար ջանալ», ջրել [ջրրել] «ոչնչացնել» տիպի բառերում, որոնցից առաջիններում ունենք երկբարբառակերպ, իսկ մյուսներում առերևույթ առկա է «ձայնեղ+ձայնորդ» տիպի հաջորդականություն, այդ դիրքը միշտ եղել է ձայնավորանախորդ:

значение, т.е. не было дифференцирующего фактора (Г. Джаукян, Э. Агаян). Наша точка зрения основывается на иной интерпретации двух вышеуказанных положений: 1) придыхательность и.-е. смычных являлась фонетическим признаком; 2) придыхательность звонких аффрикат, а также смычных в соответствующих диалектах современного армянского языка имеет не фонологическое, а фонетическое значение, поскольку в этих диалектах нет смыслоразличительных противопоставлений *звонких~звонких придыхательных*. Следовательно, в диалектах, якобы различающих четырехступенчатую систему, по сути есть лишь три фонологических серии указанных согласных: *звонкие, непридыхательные глухие и придыхательные глухие*.

**Vardan Petrosyan – Phonemic Descriptions (a Synchronic Examination)
of Old Armenian Affricates**

Old Armenian possessed three phonemic categories – voiced ((δ /j/, ζ /jʃ/), non-aspirated voiceless (δ /c/, and aspirated voiceless (g /cʰ/, ζ /čʰ/) /č/). According to several Armenologists, namely H. Pederson, A. Meillet, H. Acharian, E. Benveniste, H. Vogt, W. S. Allen, H. Muradyan and others, Old Armenian (OA) affricates were typically aspirated, which was a phonemic feature. This theory is supported by two main hypotheses. 1. Being the reflection of Indo-European aspirated voiced occlusive (*b^h, *g^h, *d^h), OA voiced occlusives had preserved their aspiration. Hence, no transfer of occlusive consonants took place in Armenian in the traditional sense. 2) The voiced aspiration typical of voiced occlusive and affricates of several dialects of Historical Armenia (those of Akna, Hamshen, Hajn, Sebastia, Ararat, Mush, Nor Jugha, Nor Nakhichevan, etc.) bears a phonemic value. Moreover, they differentiate a four-category system of voiced occlusive and occlusive-fricatives in some dialects, (those of Ararat, Mush, nor Jugha) – with such phonemic contrasts as p^h/b^h/~ p/b/~ ɸ^h/p^h/ ~ ɸ/p/, ζ^h / \jmath^h /~ ζ / \jmath /~ δ / $\check{\zeta}$ /~ ζ / $\check{\zeta}$ /. The second theory, which is supported and further grounded by us, postulates that OA affricates had only a phonemic value, i.e. there was no distinctive factor (G. Jahukyan, E. Aghayan). This theory rests on another interpretation of the above-mentioned two hypotheses. 1) The aspiration of IE occlusives was not a phonemic feature. 2) The aspiration of the voiced occlusive-fricatives (also occlusive consonants) of corresponding Modern Armenian (MA) dialects carries a phonetic and not a phonemic value, because these dialects lack voiced–aspirated contrasts. Therefore, dialects with the so-called four-category system of occlusive and occlusive-fricatives distinguish between only three phonemic categories of the given consonants – voiced, non-aspirated voiceless and aspirated voiceless ones.

Ներկայացվել է 11.02.2020

Գրախոսվել է 25.02.2020

Ընդունվել է տպագրության 30.06.2020